ԱՎԴ4/0080/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 դեկտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՎԴ4/0080/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2025 թվականի օգոստոսի 29-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Ռասուլ Ազադեհդել Բոլդաջիի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Արաքսյա Վարուժանի Բեստիլյանի

վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 84125225 (ԱՎԴ4/0080/01/25) քրեական վարույթը:

2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ռ.Առաքելյան) 2025 թվականի սեպտեմբերի 2-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0080/01/25 քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի նոյեմբերի 26-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0080/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Մ.Արամյան) 2025 թվականի դեկտեմբերի 16-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0080/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի դեկտեմբերի 18-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Ռասուլ Ազադեհդել Բոլդաջիի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«[Ն]ա, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ թմրամիջոցների և*

հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ (...), չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ այդպիսիք ձեռք բերելու, պահելու կամ իրացնելու թույլտվություն, խմբի կազմում, նախնական համաձայնության գալով իր կնոջ՝ Արաքսյա Վարուժանի Բեստրիլյանի հետ հանցանքը համատեղ կատարելու մասին, քննությամբ չպարզված հանգամանքներում, ԻԻՀ-ից մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու և թմրամիջոցի տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով, իրացնելու նպատակով ապօրինի ՀՀ է տեղափոխել առանձնապես խոշոր չափերով՝ 0,53 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 245 հատ «B2» գրառմամբ դեղահաբ:

Այսպես.

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ռասուլ Ազադեհդել Բոլդաջին, կնոջ՝ Արաքսյա Բեստրիլյանի հետ գտնվելով ԻԻՀ-ում, նախնական համաձայնության գալով վերջինիս հետ հանցանքը համատեղ կատարելու մասին, ՀՀ-ում ապօրինի իրացնելու նպատակով, քննությամբ ինքնությունը չպարզված անձից և հանգամանքներում, ձեռք է բերել «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշման N 1 հավելվածով նախատեսված, առանձնապես խոշոր չափերով՝ 0,53 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 245 հատ «B2» գրառմամբ դեղահաբ, որոնք Արաքսյա Բեստրիլյանի հետ միասին ՀՀ ապօրինի տեղափոխելու և ՀՀ-ում դրանք իրացնելու նպատակով, թաքցրել է իր անձնական

*օգտագործման սպորտային կոշիկի ներբանի մեջ և մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու և թմրամիջոցի տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով, 2025 թվականի մարտի 19-ին ՀՀ պետական սահմանի «Ագարակ» մաքսային անցակետով, Իրանի Իսլամական Հանրապետությունից ապօրինի տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն: ՀՀ պետական սահմանն անցնելուց հետո, Ռասուլ Բոլդաջին հիշյալ սպորտային կոշիկը, մնացած հագուստների հետ միասին, դրել է իր կողմից շահագործվող «***** ****» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սրահում և Արաքսյա Բեստիլյանի հետ միասին ****** ******* ուղևորվել է դեպի *****, որի ընթացքում՝ *-* ********** ***** **** ***** տարածքում՝ *****-***** ********** ***-** ********* *********, 2025 թվականի մարտի 19-ին՝ ժամը 12:30-ին, Ռասուլ Բոլդաջին և Արաքսյա Բեստիլյանը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալվել են, իսկ նախաձեռնված քրեական վարույթով կատարված դեպքի վայրի սկզբնական զննությամբ 0,53 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 245 հատ «B2» գրառմամբ դեղահաբերը հայտնաբերվել են և վերցվել: (…)»*[1]:

6.1. Նույնանման փաստական հանգամանքներով ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել նաև Արաքսյա Բեստիլյանի նկատմամբ[2]:

7. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ պաշտպան Ս.Մինասյանի միջնորդությունը, 2025 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվում է, որ վարույթի մասնավոր մասնակիցները ներկայումս բնակվում են Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 28-30:
[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 32-34:

դուրս: Մեղադրյալ Ա.Բեսրիլյանը բնակվում է ** ******** *****, ******* *******, ******* ************, մեղադրյալ Ռ.Բոլդաջին գտնվում է «Նուբարաշեն» ՔԿՀ–ում (**, *. *****, ********** ****** *), իսկ մեղադրյալ Ա.Բեսրիլյանի պաշտպան Ս.Մինասյանը հայտնեց, որ գործունեություն է իրականացնում *. ******* (****** **** ** և ************ հասցեներում), պաշտպան Վահե Մարգարյանը (հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի՝ 02.09.2025թ որոշմամբ նշանակվել է մեղադրյալ Ռ.Բոլդաջիի պաշտպան), բնակվում է *.************: Մինչ այդ մեղադրյալ Ռ.Բոլդաջիի շահերի պաշտպանությունն իրականացրել է հանրային պաշտպան Մ.Մանգասարյանը (*. *****): Դատարանը փաստում է, որ հանրային պաշտպան Վահե Մարգարյանը վարույթի մասնավոր մասնակից է հանդիսանում, սակայն վարույթին ներգրավվել է հանրային կարգով:

Այսինքն՝ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը (3-ից 2-ը) բնակվում են առաջին ատյանի մեկ այլ դատարանի՝ մասնավորապես՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար անհրաժեշտ է, որպեսզի վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվեն առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում, Դատարանը փաստում է նաև, որ վարույթին օժանդակող անձ՝ թարգմանիչ Ռ.Թահմասյանը նույնպես բնակվում է *. ********:

Նախնական դատաքննության ժամանակ պաշտպանական կողմը միջնորդություն է ներկայացրել քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, հանրային մեղադրող Մ.Հակոբյանը (...) չի առարկել ներկայացված միջնորդության դեմ: Դատարանը փաստում է, որ սույն քրեական գործով դեռևս հիմնական դատաքննություն նշանակելու մասին որոշում չի կայացվել, հետևաբար որևէ ապացույց չի հետազոտվել և ընդդատությունը փոխելով չի տուժի նաև արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի քրեական գործը ողջամիտ ժամկետում քննության առնելու վերաբերյալ սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ բավարարված են ՀՀ քրեական դատավարության [օրենսգրքի] 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար սահմանված պահանջները, ինչով էլ պայմանավորված՝ Դատարանը որոշում է մեղադրյալ Արաքսյա Վարուժանի Բեսպիլյանի պաշտպան Սահակ Մինասյանի միջնորդությունը բավարարել, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[3]:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Թ]իվ ԱՎԴ4/0080/01/25 քրեական գործով վարույթների և որոշման ուսումնասիրությամբ պարզվում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում դատաքննության ժամանակ Դատարանը տարածքային ընդդատությունը փոխելու հարցը քննարկելու ժամանակ դիտարկել է նաև մեղադրյալ Ռ.Բոլդաջիին, ով ոչ թե բնակվում է՝ այլ պահվում է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում գտնվող քրեակատարողական հիմնարկում:*

(…) Դատարանը կարծում է, որ մեղադրյալի պահվելը որևէ քրեակատարողական հիմնարկում չի կարող դիտարկվել որպես մեղադրյալի բնակության վայր, քանի որ վերջինիս ազատ կամաարտահայտությունը բնակության վայրի ընտրության առումով սահմանափակված է, բացի այդ Դատարանը կարող է որոշել նրա պահման կոնկրետ վայրը՝ ըստ անհրաժեշտության:

Բացի այդ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում դատաքննության ժամանակ Դատարանը դիտարկել է մեղադրյալ Ա.Բեսպիլյանի պաշտպան Ս.Մինասյանի ոչ թե բնակության հասցեն՝ ինչը նախատեսում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածը, այլ

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 167-170:

գործունեության իրականացման հասցեն: Տվյալ դեպքում ողջամտորեն կարող է փաստվել, որ անձը կարող է բնակվել մեկ վայրում, սակայն գործունեություն իրականացնել մեկ այլ վայրում: Նման պարագայում չի պարզվել և չի հաստատվել նաև այն փաստը, որ վերջինս բնակվում է հենց Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի տարածքում:

Վերոգրյալի հիմնավորմամբ տարածքային ընդդատությունը փոխելու համար վկայակոչված հանգամանքները չեն կարող հանդիսանալ թույլատրելի, քանի որ չեն համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բացառիկ չափանիշներին:

Ստացվում է, որ սույն պարագայում քրեական գործի տարածքային ընդդատության փոփոխությունը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից, քանի որ օրենսգիրքը ընդդատության փոփոխելը կապել է վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում բնակվելու պայմանի հետ, ինչը սույն պարագայում բացակայում է:

Հետևաբար՝ վերոնշյալ հանգամանքները համադրելով և գնահատելով վերաբերելի իրավական նորմերի համատեքստում ստացվում է, որ գործի տարածքային ընդդատությունը փոխելու դրությամբ առնվազն առկա չէին հստակ տեղեկություններ առ այն, որ սույն քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում են հենց Երևան քաղաքի տարածքում և, հետևաբար սույն գործով տարածքային ընդդատությունը չի կարող փոխվել և քրեական գործն ուղարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 172-175:

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ4/0080/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

12. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ «*(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով նաև, որ քրեական գործով դեռևս հիմնական դատալսումներ նշանակելու մասին որոշում չի կայացվել, գտել է, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու արդյունքում չի տուժի նաև արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի քրեական գործը ողջամիտ ժամկետում քննության առնելու սկզբունքը[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու որոշմանը՝ փաստելով, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու դրությամբ առնվազն առկա չէին հստակ տեղեկություններ առ այն, որ սույն քրեական վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում է հենց Երևան քաղաքի տարածքում:

Միևնույն ժամանակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն ընդգծել է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վկայակոչված հանգամանքները չէին կարող հիմք հանդիսանալ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար՝ հաշվի առնելով, որ դրանք չեն

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բացառիկության չափանիշին[9]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Այսպես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ռ.Բոլդաջիի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանքը[10], և վերջինս գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, մեղադրյալ Ա.Բեստիլյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված տնային կալանքը, և վերջինս բնակվում է ******** *******[11], պաշտպան Ս.Մինասյանի գործունեության հասցեն թեև ***** ****** *, սակայն, ըստ վարույթի նյութերի, վերջինս բնակվում է ********** *******[12], իսկ պաշտպան Վ.Մարգարյանի բնակության վայրն է ***** **** *****[13]: Այս առնչությամբ հարկ է նշել, որ պաշտպանը յուրաքանչյուր դեպքում հանդես է գալիս որպես վարույթի մասնավոր մասնակից և վերջինի կարգավիճակի որևէ տարբերակում՝ պայմանավորված վարույթին հանրային կարգով ներգրավված լինելու հանգամանքով, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում:

Վերոգրյալ փաստական տվյալների պայմաններում չի հաստատվում, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է

---

[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 134-137:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 129-133:
[12] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթ 144:
[13] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթ 141:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը սույն դեպքում բացակայում է:

16. Վերոշարադրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդունելի է համարում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատողությունը և փաստում, որ ինչպես համապատասխան քրեակատարողական հիմնարկը, որտեղ գտնվում է մեղադրյալը, այնպես էլ կիրառված խափանման միջոցը, վարույթի ընթացքում կարող են փոփոխվել, հետևաբար վերոգրյալով պայմանավորված քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը չի բխում արդարադատության շահից:

17. Բացի այդ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կրկնում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել միայն բացառիկ դեպքերում, **երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի** ընդդատությունը փոխելու համար առաջադրվող պայմանների առկայությունը**,** ինչպես նաև քրեական **վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից**: Մինչդեռ, սույն դեպքում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ծանրակշիռ փաստարկների վկայակոչմամբ չի հիմնավորել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել վերոնշյալ բացառիկ հիմքերի բացակայության պայմաններում**:**

18. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանի կողմից թիվ ԱՎԴ4/0080/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

19. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է փոխանցել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԱՎԴ4/0080/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Լ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ